

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը ընդունում է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունւում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպեկ:



ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒՄ

Կրթութեան ճշգրտում.—Ներքին Տեսութիւն.
Նամակ Ախալքալաքից. Նամակ Գարաշիւզազից.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐՈՒՄ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—
Հեռագրութիւն.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սալոմէ Նորատուհան.

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՄ

Կրթութիւնը մեր ամբողջ կեանքի ան-
կենսաբան է: Եւրոպայի մի քանի երկր-
ներում բժշկիչները հետազոտելով նոր սե-
րունդի առողջութիւնը՝ հասան այն եզրա-
կացութեան, որ այժմեան կրթութիւնից
առաջ են գալիս մի շարք չարիքներ: Բը-
ժիշկները մեղադրում են մանկավարժներին
նրանում, որ սրանք իրանց կրթութեան
սխտեմայով շատ անգամ փչացնում են
մանուկների առողջութիւնը, որ այդ ման-
կավարժները, իսպառ մոռանալով հին
ճշմարտութիւնը թէ՛ «mens sana in cor-
pore sano» (առողջ մարմին մէջ առողջ
հոգի), հոգնեցնում են մանուկների ուղե-
ղը, մի իրողութիւն, որ շատ վատ ազդե-
ցութիւն ունի նոր սերնդի կանոնաւոր
աճման վրա:

Փարիզի բժշկական ճեմարանը և Անդ-
լիայի բժշկական ժողովը արդէն մի շարք
նիստեր են նուիրում «կրթութեան ճշնա-
ման» հարցին և նրա փաստաւոր ազդեցու-
թեան առաջն առնելու կարելիութեանը:
Անգլիայի բժիշկների ժողովը օրգան հա-
մարվող մի լրագիր, հաստատելով բժիշկ-
ների հետազոտութիւնը, ասում է որ այժ-
մեան կրթութեան գլխաւոր չարիքներից
մինն էլ այն է, որ այդ կրթութիւնը ան-
ուշադիր է դէպի մանուկների անհաս-
կան առանձնայատկութիւնները: Այդ չա-
րիքը բաւական համար յիշեալ օրգանը
խորհուրդ է տալիս իւրաքանչիւր ուսում-
նարանի համար յատկապէս մի մի բժիշկ
ունենալ, որի պարտաւորութիւնը պէտք է
լինի՝ հետազոտել իւրաքանչիւր մանուկի
թէ՛ ընտանեկան դրութիւնը և թէ՛ կեան-
քի պատմութիւնը և հսկել նրա վրա առող-
ջապահական տեսակէտից, որպէս զի մանու-
կը չենթարկվի իր մարմնի և ուղեղի ան-

շարի լարման ու յղման ծնունդին: Բժիշկի
հսկողութեան տակ պէտք է լինի ոչ թէ
միայն ուսումնարանի առողջապահական
մասը, այլ և ուսումնական-կրթութեան
բոլոր՝ առողջապահական կողմից: Բժիշկը
պէտք է հսկի որ ուսումնարանը կանոնա-
ւոր օդափոխութեան (վէնտիլացիայի) են-
թարկվի, ունենայ պատշաճաւոր լուսաւո-
րութիւն, կանոնաւոր կերպով շինված նը-
սարաններ, պէտք է հսկի, որ պարապ-
մունքների մէջ հարկաւոր դասամիջոցներ
լինեն խաղալու համար և դիւրեւայ պա-
րապմունքի մէջ փնտաւար աւելորդութիւն
չը լինի և այլն: Բժիշկը նոյնպէս պէտք է
իրաւունք ունենայ հսկել, որ ծանր և խիստ
հարցաքննութիւնների չենթարկվեն աշա-
կերանները, որ անչափ խիստ միջոցով չա-
ռաջանան փնտաւար բարոյական հետե-
ւանքներ, որ դասաւանդութիւնը որոշ
պարզ և զործնական լինի:

Բնականաբար առաջ է գալիս մի հարց՝
թէ արդեօք ինչպէս կը վերաբերվին ման-
կավարժները դէպի այդ բարեփոխութիւն-
ները, թէ արդեօք կը համաձայնվին նը-
րանք բժշկական վերահսկողութեան այդ
«տարր տարր» դպրոցի ուսումնական շըր-
ջանի մէջ մտնելուն...

Այդ կարելիութիւնը նախատեսելով
անգլիայի մի բժիշկ, մի ոմն զօրօր Բոուլ-
ստօն, առաջարկեց որ Անգլիայի բժիշկները
ժողովի նախագիծը ընդունվի ժամանակա-
ւոր կերպով, այսինքն մինչև որ իւրաքան-
չիւր մանկավարժ չանցնէ ուսումնարան-
նական և ընդհանուր առողջապա-
հութեան դասընթացը: Կրա համար նոյն
բժիշկ Բոուլստօն առաջարկում է մտցնել
իւրաքանչիւր ուսումնարանում առողջա-
պահութեան մի առանձին դասընթացը,
որ կապված լինէր յատկապէս մանկավարժ-
ների համար յարմարեցած ընդհանուր
բժշկականութեան դասընթացին:

Ի դէպ առաջ կը բերենք այստեղ Լօն-
դօնի կին-բժիշկ Գարրէտ Անդրսօնի կար-
ծիքը «կրթութեան ճշնաման» մասին: Տի-
կինը հետազոտեց Լօնդօնի միջնակարգ
օրնորդական դպրոցները, և այն եզրակա-
ցութեան եկաւ, որ այդ դպրոցներում օ-
րնորդները անընդհատ ծանրաբեռնված են
եղել իրանց այժմեայ վեր աշխատանքներով
որ արդէն վատ էր ազդել նրանց առողջու-

թեան վրա: Այդ չարիքի առաջն առնելու
համար արկին Անդրսօն առաջարկում է
ընդամենը օրական 2 1/2 մինչև 3 ժամ պա-
րապել, որ քան հնար է անայլին աշխա-
տանք քիչ տալ աշակերտուհիներին, փոք-
րացնել հարցաքննութիւնների քանակու-
թիւնը և մի և նոյն ժամանակ այդ հար-
ցաքննութիւնները թեթեւ դարձնել օրնորդ-
ների համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՍՈՒՔԱՆԱՔԻՑ

Յուլիսի 8-ին

Ախալքալաքի թղթակիցները ոչինչ չը գրեցին
լրագիրներին իրանց գաւառի մէջ ներկայ տա-
րւան պատահած մի ոչ պակաս նշանաւոր եղե-
լութեան մասին: Խոսքս դուխօրներին աղանդի
հիմնադրի սերտի վերջին ներկայացուցչի մահ-
վան մասին է: Այստեղ եւ նախապէս չունեմ լո-
սիլ դուխօրներին աղանդի ծագման և ընթացի
մասին,—այդ մասին կը տեղեկանայ ընթերցողը՝
կիթ «Մշակ» խմբագրութիւնը մի օր կը հրա-
տարակի ի միջի ալոյց դրանց մասին իմ գրած
բաւականաշատ մանրամասն պատմութիւնը, որ
արդէն գտնվում է խմբագրական պարփակումի մէջ,
—այդ մի քանի խօսքով կամենում եմ հաղորդել
այն յուզմունքը որ այժմ գոյութիւն ունի դուխօ-
րներին մէջ՝ իրանց հոգեւոր պիտի մահաւանդ յե-
տոյ:

Յայտնի է որ 1840—45 թվականներում Նիկո-
ղայի I Կայսրի հրամանով ռուս ազնւականուհի-
րը սկսեցին դադարել Անդրկովկասում Այդ միջոցին
դուխօրներն ևս դադարեցին հիմնական
ուր զիւղեր Ախալքալաքի գաւառում և մի քանի
գիւղեր Ախալքալաքի նահանգում: Այդ աղան-
դաւորներից մի մասը ևս դադարեց դէպի Արեւի
և քննակութիւն հաստատեց Ամուր գետի ավերկին
Կրանց ընդհանուր թիւը, պաշտօնական տեղեկու-
թիւնների համեմատ, հասնում է 100,000 մար-
դու: Ախալքալաք գաւառի Գարեթի գիւղում բը-
նակեց և նրանց աղանդի հիմնադրի սերունդից՝
Կարմիր ընդհանուր թիւը, որ ահալին ազդեցու-
թիւն ունէր բոլոր դուխօրներին վրա: 1864 թը-
ւի յունվարի 10-ին վախճանեց այդ ընտանիքի

վերջին արական ներկայացուցիչը՝ Պետր Վարի-
նովի: Կարմիր թիւը և նրան փոխարինեց նրա կինը՝
Լուկերիա Վասիլեւնա, ծնեալ Գուպանովա: Այս
կողմեր ճանապարհորդողների մեծ մասին յայտնի է
եղել այդ կնոջ մասին, որին ոմանք մերկայից տա-
լիս էին աստուածուհի, ուրիշները մարդաբուհի
անունը: Մի քան անհերքելի է, որ այդ կինը
վայելում էր դուխօրների մէջ մի այնպիսի յար-
գանք, որին կարող է սպասել միայն մի անկախ
իշխան իր հպատակներից: Նրա իւրաքանչիւր
խօսքը օրէնք էր իր համայնքի մարդկանց հա-
մար. նոյն իսկ ամենանշանաւոր վիճելի գործե-
րում նրա կարծիքը ունէր վճռողական ազդեցու-
թիւն: Նրա կենդանութեան միջոցին, զանազան
նոյն իսկ հեռաւոր կողմերում բնակվող դուխօ-
րները գալիս էին ի տես և յերկրպագութիւն
իրանց կրօնի պետին: Հանգուցեալ իր կենդա-
նութեան միջոցին թղթակցութիւններով աշխա-
տում էր կրօնական միութիւնը ամրապնդել իր
հօտի անդամներին մէջ: Նրա թղթերը (ПОСЛАНИЯ),
որոնց մի երկուսի հետ ինձ պատահեց է ծանո-
թանալ, կրում են իրանց վրա խորհրդաւորու-
թեան դրոշմ և գրած են միասնական ոճով: Չէ
կարելի ասել որ Լ. Վ. Կարմիր թիւ մի տղէտ
կին լինէր. բոլորովին անսնդիակ ընթերցանու-
թեան հետ, դուրկ լուսաւորութեան շնորհից՝ այդ
կինը, այնու ամենայնիւ, ունէր այնքան բնական
խելք և վարվելու տակաւ, որ յաճախ ընդունում
էր՝ իրան տեսնել ցանկացող նոյն իսկ բարձրաս-
տիճան անձններին կամ նրանց ամուսնիներին,
կարողանում էր նրանց հիւրասիրել, վարվել նրանց
հետ ինչպէս պէտք էր, և բոլորի հաճութիւնը
գրաւել դէպի իր աղանդակիցները: Եւ ահա այս
տարվայ սկզբներին վախճանեցաւ այդ կինը:
Անդաւակ լինելով՝ նրանով էլ վերջացաւ դուխօ-
րների աղանդապետի ցեղը: Ինչպէս կարծում
էր, այդ կինը ունենալու էր ահալին կարողու-
թիւն, նոյն իսկ առձեռն փողով մինչև կէս միլիօն
րուբլի: Ամենալաւ եղջերաւոր կենդանիները,
ամենազինւ ձիերը գտնվում էին նրա գոմերում:
Նրա տան կառավարութիւնը գտնվում էր երեք
տարի ժամանակով համայնքի միջոց ընտրված
գործունեայ մի անձի ձեռքում և շնորհով դուխօ-
րների մշտապատրաստ օժանդակութեան և նը-
ւիրաբերութեան, հետզհետէ աւելի ծաղիկաւ դու-
թեան էր համարւում դուխօրների կարծիքով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՆՈՄԷ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Ճաշի ժամանակ մայրս քրոջս հետ վերադարձան
տուն: Սկսեցան երկար ու բարակ պատմութիւն-
ները: Գեղեցկապէս տղամարդ էին նրան նկարա-
դրում. բարձրահասակ, սև աչք յօնքով, դադա-
տանցուն յատուկ դիւրահոս քայլուածքով, ասող
խօսող և սիրալիր՝ բնաւորութեան տէր: Ասում
էին թէ միլիթաների հաղուստը շատ սաղ է գա-
լի նրան:

Եւ լուել էի:

Գիշերվայ պահուն Մաղդալենայի հետ ինքը
եկաւ մեզ մօտ: Մենք թէյի սեղանի շուրջը նըս-
տած էինք, երբ նրանք ներս մտան: Եւ չը կարո-
ղացայ մինչև անդամ դուլտի բարձրացնել, որ
նայելի նրա վրա: Բայց ամբողջ մարմնովս զգում
էի, որ նրա նայեսցիկ ջերմութեան մէջն եմ:
Կատիւ թէ տաք ջուր ամեցին զլիսի, երբ նա
ձեռքը մինչեց ինձ իմ ձեռքը սեղմելու համար:
Ահա այժմ նայեցի. այդ, նա էր իմ առաջն
կանգնած, որին ես սիրել էի իմ երազներին և
ցնորքներին մէջ: Այն, նա էր, իմ Մանուէլը...

Չը գիտեմ որքան ժամանակ մնացին նրանք
մեզ մօտ: Իսկ երբ նրանք դնացին, ես ինչպէս որ
կայի՝ շօրերով՝ գնացի ընկայ անկողնիս մէջ:
Քղերկը զրգանքը հասկ էր իր վերին աստիճա-

նին. գլուխս կոխած բարձի մէջ, լալիս էի ու
ծիծաղում, ծիծաղում և լալիս...

Մերոնք մինչև կէս դիւրի նստած էին միւս
սենեակում: Սարկիսն էլ այն դիւրի մեղ մօտ էր:
Մի փոքր որ հանդստանաւ սիրտս, Սարկիսի քըչ-
վիտցի ձայնը ընկաւ ականջովս, որ մօրս հետ խօ-
սում էր:

—Այն աղի հարս, ասում էր նա,—մեր Սար-
կին որ Մանուէլը ուղի, ինչ լաւ կը լինէր. եր-
կուսն էլ միմիայն լաւ են բռնում:

—Հա, Սարկիս, լաւ կը լինէր, շատ լաւ: Տե-
նենք Աստուած ինչ կը տայ, մեռնեմ նրա ողոր-
մութեանը...

—Արի, աղի հարս, մի մատաղ խոտանանք,
որ էս բանը հէնց որ գլուխս եկաւ թէ չէ՝ մատա-
ղը մարմինը ու բամբակը...

Իսկով աչս խօսեցրը, վերկայաց ու տեղու-
տեղս կանգնեցի: Այո, մտածում էի ես, այլապէս
չը պիտի լինի. եթէ ինձ վիճակված է մարդու
գնալ, իմ մարդը Մանուէլը պիտի լինի, կամ եր-
բէք մարդու չը պիտի գնամ:

Սաստիկ սիրել էի Մանուէլին, նա իմ առաջին
և նուիրական սէրն էր: Ասում են՝ սիրտը սիրտ
կը ճանաչէ. նա էլ ինձ փոխարինապէս սիրեց:
Եւ կենդանի էի, ապրում էի այդ սիրով: Բայց
աւանդ, իմ բաղդը երկար չը տևեց...

Ամենայն օր կը տեսնվէիք միմիայն հետ: Մէկ
սնդամ ևս նրանց տանն էի: Մանուէլի քրոջը և
մայրը բացակայ էին, իսկ նրա հայրը, որ նոր էր
Կի-ից ժամանել այստեղ, մերձ ի մահ հիւանդ

պառկած էր միւս սենեակում: Մենք Մանուէլի
հետ, երկու հողի, առանձնացած խօսում էինք:
Եւ լուսն էլ նրա խոտուածները և յոյսերը մեր
ապագայ ամուսնական կեանքի վրա: Խոտանում
էր, որ տարին չը վերջացած պիտի դալ պակակե-
լու: Նա յուսալից էր, որ այն տարվայ ժամանա-
կամիջոցում աստիճան պիտի ստանայ և լաւ նոր
պաշտօն, որ նրան խոտացել է զենեկաւ: Այս
ամեն խոտանմանը կատարելու համար, նա
խնդրում էր, որ մի համբոյր տամ նրան, որպէս
առհաւառակայ մեր ուխտին: Եւ նայեցի նրա վրա,
աչքերս մութ կրկնեցին: Նա պատում էր համ-
բոյրին: Վերկայաց, բռնեցի նրա ձեռքը և ասա-
ցի:

—Եթէ իրօք դու ինձ սիրում ես, դնա՛ք միւս
սենեակը քո հօրը մօտ, որ մտնելու վրա է:
Եթէ թող նա օրհնէ մեզ, յետոյ դնա՛ք իմ հօր
մօտ, ես յոյսով իմ, որ իմ հայրը չի մերժի ինձ
օրհնելու...

—Այո, դնա՛ք. հէնց այս լուսիսի գնանք, յա-
րեւ նա:

Մանուէլի հայրը թախիթ վրա պառկած էր.
ևս բարձրացայ և չըբեցի նրա անկողնի մօտ:
Մանուէլը իմ օրինակին հետեց:

—Հայր, ձայն տուեց նա,—ես գիտեմ, դու
Սարկիսն սիրում ես. քանիցս անգամ ինձ ասել
ես, որ կը ցանկալիր որս պէս հարս ունենալ:
Ուրեմն օրհնի մեզ. մենք սիրում ենք մէկ մէկու:
Եթէ դու օրհնի, յետոյ կը դնա՛ք Յարութիւն
աղի օրհնութիւնը կը լեզուրենք:

Յիւրաքանչիւր իր թոյլ ձեռքը զրաւ մեր գլխին.

ուզում էր խօսել, բայց չը կարողացաւ: Նա իր
նայեսցիկ օրհնում էր մեզ: Եւ իմ մտնելու
ժամանակը դուցէ կը մտաբերեմ այն կիկիչ համ-
բոյրը, որ ոտացան իմ չըթուցները, սուրբ և ան-
մոռանալի համբոյր: Բայց երբ կուացանք ձերու-
նու աջը առնելու, նա արդէն ստաւ զիակ
էր...

Այսպէս մեր սէրը հէնց իր առաջին քայլափո-
խում մահով միջուկացաւ: Մենք սգուր էինք, և
նոր ծածկված գերեզմանի պատկառանքը պահա-
նում էր մեղանից զսպել մեր սրտերը և լուել մեր
սիրտը մասին:

—Եւ չը կարողացայ, ասաց ինձ մի օր Մա-
նուէլը իր մօր ներկայութեամբ,—անձամբ առա-
ջարկութիւն անել քո հօրը: Ահա մամի հետ ես
արդէն խօսել եմ այդ մասին: Նա խորհուրդ է
տալիս սպասել, որ դոնէ սուրբ քառասունը անց-
նի: Բայց դու գիտես, ես ես այստեղ այդքան եր-
կար ժամանակ մնալ չեմ կարող. իմ արձակուրդը
լրանալու վրա է, և ես երկու օրից յետ պիտի
ճանապարհ ընկնեմ այստեղից: Ողորմած հօգի
հայրս մեզ օրհնեց, թող հիմի մամին էլ մեզ
օրհնի և քառասունը յետոյ, ինչպէս ասում է,
նշան կը բերի ձեր տուն...

Եւ լուսն և անկողնում նստած էի: Մայրը իրան
ուրախ էր այդ ժամանակ ձեռքումս: Բայց, երբ
յանկարծ նայեցի նրա վրա և նրա նայեսցիկը ընդ-
հարկեց իմիս հետ, տեսայ մի կայծ, որ ցայտեց
նրա աչքերից և որը բաղդաւորութիւն չէր դուշա-
կում ինձ համար: Հատկացաւ իսկոյն, որ իմ նը-

կալմիկները այդ խոշոր ժողովուրդները մնալու էր համայնքի օգտին, բայց ինչպես երևում է, վերջին ժամանակ լուրջորոշոր ժողովուրդը չէր ընդունում պատճառով այդ կարողությունը անժամանակորոշ (ВЫМОРОЧНИК) համարվելու պետք է յարգումը գրավելու ուստի դեռևս այդ կնիքը կենդանու ժամանակ միջոցին աշխատում են առանց դժբախտության յանձնել համայնքի մեջ կշիռ ունեցող մի քանի անձանց, որոնք իրը թէ այժմ ուրանում են այդ գումարները իրանց ձեռքում լինելը Այդ անցքը պատճառ է մի տեսակ խորհրդատու թեման և ի հարկէ, եւ չեմ կարող երաշխաւոր լինել դրան ստուգութեանը և միայն գրում եմ այն, ինչ որ խօսվում է ժողովրդի բերանում: Կալմիկները մահից յետոյ հարց էր ծագում թէ ով պէտք է յարգուէր նրան: Երբ հանգուցեալը, դեռ սրանից 5 տարի առաջ՝ պատահելով Ելիսաւետօպօլի գոլթօրներին մէջ, ընտրել էր մի գեղեցիկագէտ, առողջապահ երիտասարդի՝ Պետր վերիցին անունով, որը հրաժարվելով առնիշտ իր կնոջից, տեղափոխվեց Լուկերիա վարկիշեալի տունը և ընտանիքում էր այնտեղ, իբրև յարգող հանգուցեալի: Կալմիկները իր հիւանդութեան միջոցին՝ բերանացի պատմելով նշանակում է իր յարգող իր ունեցածի կառավարիչ—Պետր վերիցինը: Ոչ թէ մտքից չէր կարող անցնել ընդդէմ մանաւ հանգուցեալ կնոջ վերջին կամքին, բայց ահա մեր յիշած կնիք ունեցող անձանց մտքում նախանձ է ծագում, որ մի օտարաշուքի պէտք է կառավարող դառնայ Կալմիկներին կարողութեան, գոնում են համարվողներ և մտածում են նշանակել այդ տան կառավարիչ իրանց միջոց միջին հանգուցեալ կնոջ հօրեղբորդի խնամակալ Գուրա-նովին: Եւ այդ նպատակին հասնելու համար ուղում են հեռացնել վերիցինին, ուստի և (զուգէ առաջին անգամ) գոլթօրներին պատմութեան մէջ) դիմում են մտածութեան վերաբերելու իշխանութեանը յայտնում են, որ Պետր վերիցին ապրում է Գարեխօ գիւղում առանց անցագրի և որ նա վրդովում է հետարակաց խաղաղութիւնը և այն (համաձայնաբար, գոլթօրներին համայնքի մէջ ծագում է մի սուր ատելութիւն դէպի աղանդապետ կնոջ աւանդի դանդաղութեանը և բոլոր բողոքի ետևից տեղում են միմեանց վրա Գոլթօրների աւանդապաւ կողմից: Բողոքի, օրինակելի կարգապահութիւնը վերի վար են չլքում: Կրեմլը բողոքելում են, ընդհանուր դատաստանամեղքի խորհող գոլթօրները սկսում են երևալ հաշտարար դատարանում և երկու կուսակցութեան բաժանված անձինք աշխատում են բողոքովին չը պատահել միմեանց, իսկ եթէ պատահում են՝ այն ժամանակ աշխատում են բողոքից օգտով բաւականութեամբ տալ իրանց մէջ ետացող կրքերին: Վերիցինի կուսակցիները, որոնք կարծում են Աղաքաւաքի գաւառի և Կարսի նահանգի մէջ ընտելող գոլ-

թօրները (նրանց հակառակորդները թիւը հասնում է 100 ընտանիքի) արդէն միահամուռ ցանկութեամբ խնդիր են ներկայացրել կառավարութեան, որով խնդրում են վերիցինին նշանակել կառավարող Կալմիկներին կառավարելու: Հետեանքը դեռ յայտնի չէ: Ահա մի բաւական մարմին քայքայում, որ կառավարում է այսօր մեր աշխարհը: Արեւելի մի մասի մէջ արդէն էլ լուրում են հաստատուող ուղանալիքներ մարտիան դառնալու, մի միջոց, որ մշտապէս գործադրվում է հասարակ ժողովրդի կողմից, որի հակադրութիւնը կրօնի մասին գիտակցական բնութագրութեան արդիւնք չէ...

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՆԻՔԱԳԻՑ

Յուլիսի 6-ին

Երևանի համարեա բոլոր պաշտօնատարները և մի քանի ունեւոր ընտանիքներ այժմ եկած են այստեղ՝ ամառանոց: Գարաշիպազը, հետքը (Վաղ-կաճոր) մինչև անգամ, յայտնի էր իր առողջաբար օղով և դիմելով Աժմ նայում են շուրջը, անտառներով ծածկված տարեի, ձորերի, մարգագետինների, այս և այն կողմ սառը և հանքային ջրեր, օդը ու կլիման էլ աննկարագրելի է: Սկզբնաւ յոճիս ամառի կէտից այդ ամառանոցը կենդանանում է. նայում են անտառին՝ ամեն տեղ շրջված են մարդիկ, որոնք քիչ են ամառ, որոնք դառնում են, և երբեմն երբեմն անտառի խորքից լսում են, Գառնու-Քաթիկայի երգերից սուղի հետ միասին երգելիս: Երևանից, որ առհասարակ անընդհանր է օդով և յերանի դարձան լաւ եղանակից, այստեղ միայն, եթէ դալիս է, կարողանում է մի փոքր վայելել ընտելեան բաւրիքը:

Գարաշիպազը ինչքան լաւ է այդ կողմից, այնքան էլ յետ է իր ընտելանմանութիւնը: Բացի կառավարական բնակարաններից, ոչ մի կանոնաւոր տուն չէր կարող դանել տարեւոյ համար. նոյն իսկ գոմերը, որոնք տեղացի մայականների անաւուններին էին ծառայում, որովում են 20—30—40 ր. վարձով: Երևանից ուրախ է եթէ այդ էլ գտնել: Ոչ մի կանոնաւոր հիւրանոց չը կայ, եթէ կայ էլ թիֆլիսի վերջին շաբաթից վառ է: Կարգին կերակուր չէր կարող գտնել: Մի խօսքով՝ ամառը թանգ է և նոյն իսկ միջակ կարողութեան տէր մարդու անմատչելի. սրա վրա էլ աւելացրէք քաղաքից հեռու լինելը (52 վերստ) և կը տեսնէք, որ այդ է պատճառը, որ երևանցիները ամառը ամառը մնալով Երևանի օթի, փօշի, չաբի, մածակների և ուրիշ խաղիքի գեղեցիկների մէջ, չէ կարողանում գալ ամառանոց և նախապատու է մնալ Երևանի փայլած կլիմայի մէջ: Ձեռք ուղում նկարագրել Գարաշիպազի վանքը, որը շինված է հայոց Գաղիկ թագաւորի օրով և

մինչև այժմ կենդանի խօսում է հայոց հին բարեպաշտութեան ու ճարտարագիտութեան մասին. մի առ մի չենք նկարագրում նրա բաղնիքի արձանագրութիւնները, մօտ եղող ուխտատեղիները և հանքային ջրերը, որոնց մասին մի քանի անգամ գրված է «Մշակի» մէջ: Մենք ուղում ենք միայն մի քանի խօսք տակ այդ գաւառամասի գիւղացիներին մատին: Գարաշիպազը կարծում է Նոր-Բայազէտի գաւառի մի մասը Այդտեղ կան մօտ 50 գիւղեր, որոնց բնակիչներին մեծ մասը հայեր են, մալականները և թուրքերը միայն 4—5 գիւղեր են: Այդ բոլորը պետական գիւղեր են, բոլորն էլ ունեն լաւ վարելահողեր և արօտատեղիներ: Այդտեղանի տարեի մի մասը (Շահի-բուզաղ) և Գարաշիպազի տարեի ծածկված են գիւղացիների հօտերով, որոնք տասն հազարներով են հաշուում: Ամբողջ ամառը գիւղացի ընտանիքները այդ տարեւում պատրաստում են իւր, պանիր, հաւաքում են բուրդը, աճեցնում են կենդանիներին: Այդ իսկ ժամանակում տղամարդիկ վարում ցանում են հացահատիկներ, հնձում են խոտ, ցորեն, դարի և ուրիշ բոյսերը: Աշնանը կինը վերադառնում է տարիք,— աշխատողից, իսկ տղամարդը ամեն բան պատրաստելուց յետոյ մնում է կալանելու, որը տեսում է մի կամ մէկ ու կէս ամիս: Այնուհետև գիւղացու մասանը լին է: Մի խօսքով՝ սկսած յունիս ամիսից մինչև սեպտեմբեր, Գարաշիպազի գիւղացին ամենանշանակալիս է. նա ոչնչի պակասութիւն չէ քաշում, նա վայելում է բնութեան ամենալաւ բարիքը: Բայց սկսած հոկտեմբերից այդ գաւառամասում կեսնքը անտանելի է դառնում. տարտալիքի ցորեն, ձիւն, ձիւնախառն անձրև, ցիւր, այս բոլորը անպակաս է լինում են տարիներ, որ գիւղերի մէջ երթնելու թիւը, նոյն իսկ փոստային ճանապարհի վրա գտնված գիւղերի մէջ, կարծում է: Այդ ժամանակ կարծես այլ ևս նոյն Գարաշիպազ չէ: Գրաւ վրա էլ աւելացրէք երաշտ տարիներին՝ ցորենի, դարու, խոտի սակաւութիւնը,— այդ ժամանակ բողոքովին անտանելի է լինում Գարաշիպազի գիւղացու գրովիւնը, ինչպէս անցեալ 1886 թ. էլ ձմեռն էր, երբ կենդանիները կերակրի սակաւութեան պատճառով բազմաթիւ անտաններ կոտորվեցան:

Այս տարվայ հունձը շատ լաւ բերք է խոտանում, խոտը շատ լաւ է և հունձը արդէն ընդված է, իսկ հացահատիկները լաւ կարող են լինել, եթէ կարկուտը, կամ ուրիշ աղակալի անսպասելի վնասներ չը հասնեն:

Ձիւնուորացիութիւնը մի աւելի աչքի ընկնող փոփոխութիւն է մտքել Գարաշիպազի գիւղացիների կեանքի մէջ: Երբեք յայտնի է մեր գիւղացիները ընդհանրապէս իրանց որդիկանց ամուսնացնում են 15—20 տարեկան հասակում. բայց որովհետև այժմ 21 տարեկան հասակից արդէն տալիս են նրան. անդադար հնչում է այն ձայնը: Կարելի է արդեօք փախչել նրանից, երբ նա իմ սեփական սրտիս խորքերից է արձագանք տալի. որ ջուրն էլ որ ընկնեմ, նա ինձ պիտի միշտ հալածէ: Աղաւթութիւն չը կայ ինձ համար նրանից: Տեսնում եմ, գիւղեր է. միջոց երեք հողի նստած ենք, միշտ այդպէս՝ եւ, նա և նրա քայլը: Այն օրը ննջեցեալի եօթնիկ օրն էր: Սգորին այն օրն երեկոյի և գերեզմանատուն էին տարել: Սերանք ամենքը յորձան լինելով, խորը քնի մէջ էին միւս անհետներում: Միայն երեքս էինք այդ գիւղերը հսկում:

—Սալոմէ, չնչնում է նրա ձայնը իմ ականջում: —Երբեք եմ քո անտառով, քո սիրով, որ տարին չանցած պիտի վերադառնամ... Մի լար, հոգիս, ամեն շաբաթ ինձանից նստակ կը տառնաս... Մաղաքայինս, հիմի դու խօսի. հանգստացրո՛ւ Սալոմէին...

Գլխիս մէջ լսելը չը կար. կասկած չէր, որ մէջ զուլաւ բռնվել էր: Արիւնս կրակնորիս մէջ կը սառնէր, երբ նա իմ մօտ նստած տեղից կը վերկենար ծխախոտ կայքներու համար, թոււ էր ինձ թէ՛ ահա սրտից որ է պիտի անհետանայ և ինձ անհուն վշտերի մէջ թողնէ իմ թախիծը մտաւանջում էր նրան կարի յոյժ. մինչև ստաւատ նա լալիս էր ինձ հետ միասին. լալիս էր մեզ հետ և նրա քայլը: Մեր սրտերը դրում էին, որ ահա այս ժամերի հետ միասին վերջանում է մեր երկուսիս բաղը:

Գարձեալ հնչում է ականջիս մէջ. «մի լար, հոգիս, մի տանջի և խնայէ ինձ, քո այդ ար-

նում են զինուոր, ուստի գիւղացին այլ ևս չէ շատարում ամուսնացնել իր որդեան: Այն ինչ անցեալ տարիներում, Գարաշիպազում լինում էին մօտ 100 հարսանիք, առ այժմ դեռ մէկն էլ չը կայ: Հետեալար, եթէ գիւղացին նոր պակսվելով երբեմն երբեմն դաւաճութիւնով էր անցկացնում իր ձմեռայն առանց այն էլ պարսպ օրերը, այժմ այդ էլ լինելու չէ և այս պատճառով էլ այս գաւառամասի վաճառականները գուշակում են, որ այս ձմեռ լաւ առևտուր չեն կարող ունենալ:

Գարաշիպազի գիւղերում յայտնի է Ախտա գիւղը, որտեղ կայ և հաշտարար դատարան: Այդ գիւղը ամբողջ գաւառամասում հռչակված է... Սրանից մի քանի օր առաջ այդ իսկ գիւղում բռնիցին երեք տղաներ, որոնք մեղադրվում են թմրեղ կողոպտած են Երևանի ս. Պօղոս-Պետրոս լուրում է որ նրանից մէկը խոտորվանվել է իր արարքը, իսկ միւսները, որոնց թոււ է մի քահանայի որդի, արձակված են երաշխաւորութեամբ:

Ս. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մեզ խնդրում են տպել հետեւի արդարացի նկատողութիւնը. Հայոց փառաբան. զարգացնելի վարժապետներ և վարժուհիների դրութիւնը իսկապէս մի վերին աստիճանի աննախանձելի պատկեր է ներկայացնում: Հողաբարձները երբ կաննում են, քայքայում են նոյն առճիգները, երբ ցանկանում են հեռացնում են նոյն դպրոցները: Ուսուցիչները մեծ պատասխանատուութիւն ունեն. միայնակ պահանջում են նախապատրաստութիւն, վարձակալներ, պահանջում են որ նոյն համապատասխանեն դասաւանդ պայմաններին, —բայց նոյն ուսուցիչները և վարժուհիները համարեա ամեն տարի, հոգաբարձուների կապիղիների պատճառով, ատկուած են նոր տեղեր որոնել, այս և այն կողմը ընկնել, տանտեալ խնդրներ ուղարկել՝ մի քանի հարկւրով մի որ և է տեղ գտնելու համար: Այդ դեռ բաւական չէ. ամուսնայ ամուսնի հողաբարձները ջնում են, ոչինչ չեն շինում, և երբ սեպտեմբերը հասնում է, մի քանի օրվայ ընթացքում հաւաքում են ամեն տեսակ արժանաւոր թէ անարժան ուսուցիչներ, և լցնում դպրոցները: Մեր հոգաբարձուները մի բան միայն ետանդով են կատարում,—այդ այն է, որ որքան կարելի է քչացնել ուսուցչի առճիգը, հարստահարել նրա աշխատանքը և անխիղճ կերպով օգուտ քաղել նրանց անեղանելի դրութիւնից, հասցնելով վարժապետի և վարժուհու առճիգը մինչև 200 կամ 250 բուրլուս:

Ա.Լ.ՔԱՆՆՈՒՄՈՒՄԻՆ մեզ գրում են: «Մեր ու-

կատողութիւնից չը խուսափեց նրա աչքերից արձակված երկու նետը, աշխատում էր սիրտս առնելու: օճապատիր գգուհանքով, խաղաղիկ օրհնութիւններով: ձմեռայն սիրտը սիրտը խաղաղ զրծվար է: Նրա այդ նայեալը անմոռանալի մնաց իմ յիշողութեանս մէջ. այդ րօպէական նայեալը կատե՛ր բարձրաձայն աղաղակից, «ոչ, ոչ, Մանուէլը քո մարդը չը պիտի լինի. լաւ իմացիր այդ, և հանիր մտքիցդ այդ մասին քո ամեն ակնկալութիւններդ»: Երբ որ այդ նայեալը չէր, այլ կայծակի, որ շանիք ու անցում իմ սրտի խորքերից և այսպէս ծանրացաւ իմ խաչի վրա: Մանուէլին ես ոչինչ չը հաղորդեցի իմ այս կառկածանքների նկատմամբ, լեղուս չէր դալի, որ ես զանգաւաղէի նրա մօր վրա: Որոշելի լուկ և ուշի ուշով հետամուտ լինել նրա մօր վարմունքներին:

Ինչ անտանելի, արդարեւ, ցաւ է մարդկանց յաւաքերութիւնները միմեանց հետ: Երեք հողի էինք ահա այնտեղ. արտաքուստ համաձայն, հաշու և խաղաղ, մեր բարդի համար օղակին ամրոցներ էինք խօսքերով կառուցանում, մինչդեռ մեղանից մէկը ուխտ է դնում իր սրտի մէջ՝ երբեք իրականութեան չը տալ այդ ամրոցներին. չար ողի դառնալ մեր երկուսիս համար: Եւ ով գիտէ մեր երկուսիս այժմեան բարդաւոր բողբոջները ինչ տեսարաններ, ինչ անցք ու դէպքեր են երբում երբորդի միտքը, որ այդ աստիճան կայծակի են տալի նրա աչքերը: Եւ կառկածանայ ծխախիւ մէջ տարուբերվում եմ: Բայց իմ Մանուէլի մըտքով ինչեր էին անցնում: Ո՛վ կարող է այս հարցին պատասխանել: Գուցէ որդին գիտեր մօր

սրտին և նշանակութիւն չէր տալի նրան. դուցէ չը գիտէր միանշանակ, զուցէ գիտէր և այդ հանգամանքից այլաբան էր նրա հոգիին: Որոշուտեղից և ումից իմանա... Այսպէս ահա, երբեք արտաքուստ համաձայն, բայց ի ներքուստ՝ կամ հակառակ կամ բողբոջին անցնող Ուրիշ հողին մոլթ է, ինչպէս մոլթ է և մեր սաղաքան... Այն օրերում կարող էի արեւօք երևակայել, որ ես համարեա թէ քոնս տարուց յետոյ պիտի նկարագրեմ իմ անցեալ վաղափութեան բաղը:

Ո՛հ, որպիսի արդարութեամբ անցան այն մի քանի քաղաքաւոր օրերը... Խօսքերով անկարելի է մեկնել այն ցաւը, որ ես այժմ գլուխ եմ սըրտի մէջ: Անցեալից մի փոքր անգամ չէ մնացել, երանելի օրեր էին: Լաւ է տեսած արդարեւ թէ անցեալ օրերին օր չի հասնի:

—

Եկաւ վերջապէս և այն օրհասական ժամը, երբ մենք պիտի բաժանվէինք միմեանցից...

Քանիցս անգամ փորձ եմ փորձել նկարագրել այն օրը, նրա նախաշնորհը. գիւղերը, բայց միշտ անդօր և անկարող եմ գտնվել. միտքս մտաւորում է, սիրտս ալկիլովում եմ: Ճիշտ, ակնհայտումս հնչում է նրա ձայնը և գիւղը ընկնում է ձեռքից: Գառն տարուց յետոյ, ահա լսում եմ Մանուէլի ձայնը: Այդ ձայնը միւս կեանքից, գերեզմանից չէ, որ գալիս է, այլ կենդանի՝ ծախվելով մեզ հետ և նրա քայլը: Մեր սրտերը դրում էին, որ ահա այս ժամերի հետ միասին վերջանում է մեր երկուսիս բաղը:

Գարձեալ հնչում է ականջիս մէջ. «մի լար, հոգիս, մի տանջի և խնայէ ինձ, քո այդ ար-

(Կը շարունակվի)

—	—	2-րդ	99	25
—	—	3-րդ	99	12
Աւերբին 50/0 առաջին փոխառութ.			265	—
երկրորդ			253	50
50/0 բէնտա			102	25
Երկնայ բէնտա			193	—
Եթե երկրորդ կենսօրէիցած փոխառութիւն			166	—
Նոր երկաթուղային բէնտա			99	25
50/0 գրաւական թղթեր կառուած.				
փոխ. կրից. ընկ.			166	24
Կրաւ. թղթ. Աքեն. բանկի			98	62
51/2/0 գրաւական թղթեր Խնրածեի կառուած. բանկի			98	75
60/0 գրաւակ. թղթ. Խարկովի կաւ. բան.			103	—
—	Պօլտաւայի		103	—
—	Պետ. Տուրակ.		102	75
—	Վիենի		103	—
—	Մօսկւայի.		102	62
—	Բնաբարա. Տաւր.		102	50
—	Նիք. Սամար.		102	62
—	Վ. Էրնայի.		102	25
—	Թիֆլիսի—27 և 43 տ.	99	—	—
—	Ռուսիայի—18 և 43 տ.	99	—	—
Վ. Ժօլսով-Կամսեկի բանկի ակցիաները			718	—
Առաջաց երկաթուղիների պլանտ. ընկ.			270	50
Բլերնակ-Վ. օլօգովի. բաղաբային օրէի-			86	—
ցացիաներ.			95	75
Պատկայի քաղաք. օրէիցացիաներ .			96	25
Օղէտայի			95	87
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ. .			83	75
Նոր փոխառութիւն			83	87
Ս. Պետերբուրգի բօլսայի արամադրու թիւնը				
Փնտերերի վերաբերմամբ ամօրա է:				

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лористъ-Меликовская ул. д. каз.